Կին և քաղաքականությունը

Մարգարիտա Հակոբյան. «Գենդերային հավասարությունը սկսվում է հենց Ազգային ժողովից»

էջ 3

Անվճար հավելված

Հատուկ թողարկում 2012

Հայոց խորհրդարանում յուրաքանչյուր 10 պատգամավորներից մեկն է կին, իսկ ողջ աշխարհում՝ յուրաքանչյուր 5 պատգամավորներից մեկը: Կանանց մասնակցության ամենացածր տոկոսն արաբական աշխարհի (14,9%) և խաղաղօվկիանոսյան (12,7%) երկրների խորհրդարաններում է: Հայաստանի Ազգային ժողովում կանանց ներկայացվածությունը 10,7% է:

«Հաջորդ ընտրություններն սկսվում են նախորդի ավարտից անմիջապես հետո...»

Թեև այս չգրված կանոնը մեզանում այնքան էլ լավ չի աշխատում, բայց ճիշտ ժամանակն է խորհրդարանական ընտրությունների արդյունքները վերլուծելով՝ առնվազն մեկ հիմնական հարցի պատասխանը ստանալ՝ ինչո՞ւ չգործեց Ընտրական օրենսգրքում ամրագրված 20-տոկոսանոց քվոտան: Չէ՞ որ կուսակցությունների նախընտրական ցուցակներում միջինը շուրջ 23% կանայք էին ներկայացված, և հանրությունն իրավունք ուներ ակնկալելու, որ կանանց ներկայացվածությունն Ազգային ժողովում այդ քվոտայի շնորհիվ առնվազն կկրկնապատկվի:

Խոսքն այժմ փորձագետներինն է, որոնցից և սպասվում է այս հարցի պատասխանը: Իհարկե, որոշ պատճառներն ակնհայտ էին հանրության համար նույնիսկ անզեն աչքով: Թերևս հիմնական պատճառը ընտրություններից անմիջապես հետո ի հայտ եկած ինքնաբացարկների շարանն էր:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով՝ ընդհանուր թվով ինքնաբացարկի դիմում ներկայացրած 102 ընտրված թեկնածուներից 26-ը կանայք էին, այդ թվում 14 կին՝ ՀՀԿ ցուցակից և 10 կին՝ ԲՀԿ ցուցակից հրաժարվել են խորհրդարան մտնելուց՝ իրենց տեղը տղամարդկանց զիջելով:

Ինքնաբացարկների գործելաոճը որպես այդպիսին բացասական է գնահատվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության կողմից: Եվրոպացի փորձագետների դիտարկմամբ՝ «ինքնաբացարկ հայտնած ընտրված թեկնածուների մեծ թիվը մտահոգիչ է ընտրողների ընտրությունը հարգելու տեսանկյունից»:

«Գենդերային քվոտան չեզոքացվեց ներկուսակցական նկատառումներով արված տեղափոխումների ու ինքնաբացարկների հետևանքով, որոնք շատ դեպքերում հանրության համար անհասկանալի մնացին»,- իրենց հերթին փաստեցին տեղական փորձագետները՝ ի դեմս Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի և «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի ներկայացուցիչների, որոնք ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և «Օքսֆամ»-ի աջակցությամբ հետազոտություններ էին կատարել այս ընտրություններում կանանց մասնակցության վերաբերյալ:

Մեզ հետ զրույցներում նրանք նշեցին քվոտայի արդյունավետ իրագործմանը խոչընդոտած ևս երկու պատճառ:

Նախ՝ կանայք չափազանց քիչ էին ներկայացված մինիմալ անցողիկ շեմին համապատասխանող առաջին հնգյակում և նույնիսկ առաջին տասնյակում: Ընդ որում, դա զգալի հեռանքաց էր 2007-ի ընտրությունների համեմատ, երբ կուսակցությունների ցուցակներում կանանց ընդգրկումը առաջին հնգյակում 4 անգամ ավելի էր, իսկ առաջին տասնյակում՝ ավելի քան 2 անգամ: Դրա հետ մեկտեղ, և՛ նախորդ, և՛ 2012-ի ընտրություններում այն կուսակցությունները, որոնք առավելագույնս էին ներկայացրել կանանց անցողիկ տեղերում, խորհրդարան չանցան:

Երկրորդ՝ կուսակցությունները, օրենքի պահանջը ապահովելու նպատակով, ընդգրկեցին իրենց ցուցակներում կանանց, որոնք իրականում դեռևս պատրաստ չէին օրենսդիր մարմնում աշխատելու, հետևաբար նրանք դիմեցին ինքնաբացարկի՝ զիջելով իրենց տեղը ուրիշներին: Նման թեկնածուները միջազգային պրակտիկայում «ոչ ռեալ թեկնածու» են որակվում:

Փորձագետների գնահատմամբ՝ ինքնաբացարկների մեխանիզմը հնարավոր էր կանխել, եթե Ընտրական օրենսգրքում ներառված լիներ կանանց ՀԿ-ների կողմից ժամանակին ներկայացված առաջարկը, որն ուղղված էր քվոտայի պահպանմանը մանդատից հրաժարվելու դեպքում, այն է՝ «մանդատից հրաժարվող կին թեկնածուին պետք է փոխարինի կուսակցության ընտրական ցուցակում հաջորդ կինը»:

Այսօր ընտրությունների արդյունքների շուրջ տեղի ունեցած բոլոր քննարկումները փաստում են, որ անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքում ներդնել այնպիսի մեխանիզմ, որը կկանխի կուսակցությունների կողմից գենդերային քվոտայի խախտումը և թույլ չի տա, որ կանանց քվոտայով տեղեր զբաղեցնեն տղամարդիկ:

Ըստ արդեն իսկ հնչեցված առաջարկների՝ խնդիրը հնարավոր է կարգավորել՝ Ընտրական օրենսգրքում ամրագրելով երկու դրույթներից մեկը. կա՛մ *«մանդատից հրաժարված կնոջ տեղը պետք է զբաղեցնի ցուցակում ընդգրկված հաջորդ կինը»*, կա՛մ էլ *«կանայք պետք է կազմեն ոչ թե ընտրական ցուցակների, այլ մանդատ ստացածների որոշակի տոկոսը»*: Ու այդ տոկոսը պետք է համապատասխանի ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագրով (2011-2015 թթ.) նախատեսված ցուցանիշին, այն է՝ *«Չեռնարկել հատուկ միջոցներ ապահովելու կանանց 30% ներկայացվածությունն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների որոշումների ընդունման մակարդակներում»*...

Այնպես որ, գոնե այս առաջարկները միասնական ձևով պաշտպանելու և իրագործելու իմաստով և՛ կանանց ՀԿ-ների, և՛ կուսակցությունների համար հաջորդ ընտրությունները արդեն սկսվել են...

Ուղերձ կուսակցություններին

«Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնը և Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցը (ՔՀՀՑ, որը միավորում է «Օքսֆամ»-ի գործընկեր 30 ՀԿ-ներ) ընտրություններից առաջ ստորագրահավաք էին կազմակերպել և ուղերձով դիմել կուսակցություններին՝ փորձելով կանխել ցուցակներում ընդգրկված կանանց հրաժարումը մանդատներից: Ուղերձում մասնավորաբար ասվում էր.

«... Հաշվի առնելով ընտրություններից հետո տարբեր պատճառաբանություններով մանդատներից հրաժարվելու՝ մի շարք կին գործիչների անցանկալի գործելակերպը նախորդ ընտրություններում՝ մենք դիմում ենք 2012 թ. համամասնական ցուցակներում ընդգրկված կանանց.

Հարգելի կին գործիչնե՛ր,

մի՛ հրաժարվեք մանդատներից, ընտրողները հույսեր են կապել Ձեզ հետ՝ քվեարկելով Ձեր օգտին:

Դիմում ենք կուսակցությունների ղեկավարներին և կուսակցությունների բոլոր անդամներին.

Օրենքի պահանջն իրականացնելու նպատակով առաջնորդվե՛ք գենդերային արդարության սկզբունքով՝ հնարավորություն ընձեռելով, որ մանդատից հրաժարվող կնոջ տեղը զբաղեցնի ցուցակի մեջ ներգրավված հաջորդ կինը:

Հասարակության համար անընդունելի է նաև, երբ մանդատից հրաժարումը կատարվում է կուսակցության հորդորով կամ խնդրանքով: Ուստի մենք դիմում ենք կուսակցությունների ղեկավարությանը.

Մի՛ առաջարկեք կուսակցության նախընտրական ցուցակներում ընդգրկված կանանց հրաժարվել իրենց մանդատներից, քանզի հասարակությունն ուզում է տեսնել իր կողմից ընտրված գործիչներին Ազգային ժողովում»:

***

Ընտրություններից անմիջապես առաջ և հետո պատրաստվել են նաև նույն բովանդակությամբ գովազդային հոլովակներ, որոնք հեռարձակվել են հեռուստատեսությամբ և ռադիոյով:

Փաստաշար



ԱԺ-ի «կանանց կազմը» 2/3-ով նորացել է

Նորընտիր Ազգային ժողովում ներկայացված 14 կին-պատգամավորներից երեքն իրավաբան են, երեքը կրթության բնագավառից են, երկուսը՝ մշակույթի ոլորտից, ևս երկուսը բիզնես ոլորտի ներկայացուցիչներ են, երկուսը՝ լրագրող, մեկը՝ արևելագետ-դիվանագետ է և մեկը՝ մաթեմատիկոս-ծրագրավորող: Իրականում, կրթությամբ մաթեմատիկոսները երեքն են, ուղղակի նրանցից երկուսը հետագայում դպրոցի տնօրեն են դարձել, իսկ մեկը՝ կուսակցականապետ:

Ի դեպ, ընտրություններին մասնակցած կին թեկնածուների թվում կրթության ոլորտի աշխատողները 33% էին կազմում, հաջորդը ժամանակավոր չաշխատող թեկնածուներն էին՝ 15%, այնուհետև պետական պաշտոնյաները՝ 11%: Առաջադրված լրագրողները, իրավաբանները, մշակույթի գործիչները՝ յուրաքանչյուրը 2%-ով էին ներկայացված:

Կին թեկնածուներին տրամադրվեց մինչև 5 տոկոս հանրային եթեր

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի՝ լրատվամիջոցների դիտարկումն արձանագրել է, որ «Հ1»-ը ընտրությունների հետ կապված լրատվական հաղորդումների 4%-ը հատկացրել է կին թեկնածուներին և կուսակցությունների ներկայացուցիչներին, իսկ հանրային ռադիոն՝ 5%-ը: Սա, դիտորդների գնահատականներով, անհամեմատ ցածր է՝ հաշվի առնելով, որ գրանցված բոլոր թեկնածուների 21%-ը կանայք էին, և այն, որ Հայաստանի պետական թիրախը օրենսդիր մարմնում կանանց 30% ներկայացվածությունն է:

Ոչ ռեալ թեկնածուներ

Մեծամասնական ընտրակարգով առաջադրված 139 թեկնածուից 11-ը կին էին (մոտ 8%), որոնցից 2-ն անցել են խորհրդարան: Ճիշտ է, մեծամասնականով առաջադրված կանանց թիվը կրկնապատկվել էր նախորդ ընտրությունների համեմատությամբ, բայց 41 ընտրատարածքներից 32-ը չունեին կին թեկնածու (78%): Ավելին, մեծամասնական կին թեկնածուներից 3-ը նախընտրական քարոզչության ծախսեր չէին հայտարարագրել, ինչը, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդների գնահատականով, կասկածի տակ է դնում նրանց թեկնածությունների իսկությունը:

Փորձագետի կարծիք

Ինչո՞ւ են կանայք խուսափում քաղաքական պայքարից

«Ընտրապայքարից կանանց խուսափելու հիմնական խոչընդոտը այդ դաշտում քրեական տարրերի առկայությունն է, թեպետ դրանով չի սահմանափակվում դեպի քաղաքականություն կանանց մուտքն արգելակող պատճառների բավական պատկառելի ցանկը»,- նման տեսակետ հայտնեցին «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի փորձագետները «Օքսֆամ» կազմակերպության նախաձեռնությամբ կայացած «Կանանց մասնակցությունը 2012-ի ԱԺ ընտրություններում» թեմայով քննարկման ընթացքում:

«Կովկաս» կենտրոնի ղեկավար, Հանրային խորհրդի քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանի ներկայացմամբ՝ նշված թեմայի ուսումնասիրությունը կենտրոնի համար որոշակի պատմություն ունի: Դեռևս 2010-ին անցկացրեցին սոցիոլոգիական հարցում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային ասպեկտների վերաբերյալ, ըստ որի բացահայտվեցին կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտող մի քանի խնդիրներ:

Այդ նույն հարցադրումը, նրա խոսքով, ծագեց ներկայումս՝ խորհրդարանական ընտրություններում կանանց մասնակցությանը վերաբերող «Օքսֆամ»-ի հետազոտական ծրագրի շրջանակներում: Այս անգամ խոչընդոտող 14 գործոնները ներկայացրեցին ֆոկուս խմբերի մասնակիցների դատին՝ առաջարկելով գնահատել դրանք 10 բալանոց սանդղակով:

Արդյունքում՝ առավել խանգարող և ամենաբարձր (7-6 միավոր) գնահատված հանգամանքների խմբում ընդգրկվեց 5 գործոն, որոնցից 3-ը վերաբերում են ընտրական գործընթացների անկատարությանը՝ ընտրակաշառքի տարածվածությունը, քաղաքական պայքարի կոշտությունն ու ագրեսիվությունը, այդ թվում՝ ահաբեկման անթույլատրելի տեխնոլոգիաների կիրառումը, քաղաքական պայքարում քրեական տարրերի առկայությունը: Կանանց մասնակցությանը խոչընդոտող մյուս 2 գործոններն էին կենցաղային և ընտանեկան հոգսերով կանանց ծանրաբեռնվածությունը և նրանց ֆինանսական սուղ հնարավորությունները:

Հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ կենցաղային և ընտանեկան հոգսերի գործոնը առաջին տեղում է հայտնվել տղամարդ մասնակիցների կարծիքով, կանայք այս գործոնի ազդեցությունը շատ ավելի ցածր են գնահատել: Դրա հետ մեկտեղ, և՛ տղամարդիկ, և՛ կանայք միակարծիք էին քաղաքական պայքարում քրեական տարրերի առկայության բացասական ազդեցությունը գնահատելիս, նշեց Հովհաննիսյանը:

Երկրորդ խմբում առանձնացված գործոնները (միջինը գնահատվել են 5-6 միավոր) վերաբերում են մի կողմից՝ կուսակցությունների ներսում ժողովրդավարության պակասին, մյուս կողմից՝ հայրիշխանական կարծրատիպերի գերակայությանը հանրային կյանքում:

Եվ վերջապես, երրորդ խմբում նշվել են խանգարող, բայց ոչ այնքան որոշիչ դեր ունեցող հանգամանքները (4-5 միավոր), որոնց թվում են՝ կանանց քաղաքական փորձառության պակասը և ընտրական տեխնոլոգիաների ոչ բավարար իմացությունը, ինչպես նաև ԶԼՄ-ների և կանանց ՀԿ-ների ոչ բավարար աջակցությունը:

«Կանանց կոնսոլիդացիայի պակաս կա հայ հասարակությունում»

Գնահատելով կանանց ՀԿ-ների և կին թեկնածուների համագործակցության կայացվածությունը՝ գենդերային հարցերի փորձագետ Լիլիթ Զաքարյանն առանձնացնում է մեխանիզմների բացակայության խնդիրը:

- Կին թեկնածուներից ոմանք ընտրություններից հետո միայն հիշեցին կանանց ՀԿ-ների մասին՝ դժգոհություն հայտնելով, որ դրանք իրենց չեն օգնել ընտրապայքարում: Ըստ իս՝ խնդիրը երկուստեք է, դրա հետ մեկտեղ, նման աջակցություն ցուցաբերելու մեխանիզմներ մեզանում չկան: Գուցե կան առանձին հաջողված կամ չհաջողված օրինակներ, բայց մեխանիզմներ, որոնց շրջանակներում կանանց կազմակերպությունները, հավատարիմ մնալով ՀԿ հատվածի՝ օրենքով ամրագրված առաքելությանը, կարողանային աջակցել կին պատգամավորության թեկնածուներին, դեռևս չկան:

Փորձագետը մատնանշեց ևս մեկ խնդիր՝ կանանց համախմբվածության պակասը հայ հասարակությունում:

- Կանանց կոնսոլիդացիան շատ թույլ է, և դրանով է բացատրվում նաև այն, որ չնայած լրագրությունը ֆեմինիզացված մասնագիտություն է, բայց այս հարցում և՛ կանանց ՀԿ-ները, և՛ կին լրագրողները, և՛ կուսակցությունների անդամ կանայք չեն կարողանում միմյանց հետ լրջորեն համագործակցել:

«Ավելի նուրբ քարոզչական տեխնոլոգիաները կարող են բերել ավելի մեծ արդյունքի»...

«Կովկաս» կենտրոնի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանի դիտարկմամբ՝ շատ հաճախ կանանց ՀԿ-ները գնում են ճակատային գրոհի՝ հաշվի չառնելով, որ գործ ունեն կարծրատիպերի հետ: Կնոջը մենք տեսնում ենք տանը, խոհանոցում: Սա է մեր ավանդական ձևավորված կարծրատիպը, ու երբ մարդն ունի կարծրատիպ և տեսնում է, որ դրսից այն ուզում են կոտրել, սկսում է պաշտպանել այն:

- Այնպես որ, երբ խոսում են կին-տղամարդ հավասարության մասին, ես՝ որպես մասնագետ, ինձ թույլ եմ տալիս առարկել, որ այստեղ պետք է ընտրել ոչ թե հավասարության ճանապարհը, այլ ներդաշնակության ճանապարհը: Այսինքն՝ նախընտրելի է խնդիրը ներկայացնել ոչ թե մեկս մյուսին փոխարինելու, այլ իրար լրացնելու սկզբունքով: Կանայք և տղամարդիկ տարբերվում են աշխարհընկալման առանձնահատկություններով, երևույթների նկատմամբ արձագանքներով: Կանտն ասում է. «Կնոջ միտքը նուրբ է և գեղեցիկ, նկատում է նրբություններ, որ տղամարդը կարող էր և չկարևորել: Տղամարդու միտքը խորն է և վերլուծական, սակայն աշխարհը չի կարող իր ամբողջության մեջ մեզ ներկայանալ, եթե այս մտքերը միմյանց հետ չվերլուծվեն»: Ես վստահ եմ, որ այս նուրբ քարոզչական տեխնոլոգիաները կարող են ավելի մեծ արդյունքի բերել: Անշուշտ, կան շատ խնդիրներ, որոնք խանգարում են կանանց քաղաքական մասնակցությանը: Սակայն գուցե հնարավոր է մի այնպիսի բանաձև մշակել, այնպիսի քարոզարշավ կազմակերպել, որոնք այդ խոչընդոտները շրջանցելով բերեն կանանց հաջողության: Եվ ԶԼՄ-ներն այս հարցում նույնպես անելիք ունեն:

«Կա՛մ պետք է չսահմանենք քվոտա, կա՛մ էլ մինչև վերջ տեր լինենք դրա ապահովմանը»

Այստեղ կան նաև իրավական որոշակի խոչընդոտներ, որոնց պատճառով ունենք կանանց ավելի քիչ ներկայացվածություն, նշեց Հովհաննիսյանը:

Ես սկզբունքորեն դեմ եմ քվոտայի գաղափարին, իհարկե, նախընտրելի է ստեղծել միջավայր, որտեղ յուրաքանչյուրը, ըստ իր հնարավորությունների, կդրսևորի իրեն, բայց ստեղծված իրավիճակը ստիպում է գնալ այդ քայլին՝ որպես ժամանակավոր միջոց սահմանելով գենդերային քվոտաները: Այո՛, սահմանված էր 20% քվոտա՝ կանանց ներկայացվածությունը ԱԺ-ում ավելացնելու նպատակով, բայց այդ քվոտան ապահովող ենթաօրենսդրական ակտեր չկային: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ռոտացիային, երբ կին պատգամավորը հրաժարվում է մանդատից, նրան փոխարինի ըստ ցուցակի հաջորդ կինը: Այս առաջարկով հանդես էին եկել նաև Հանրային խորհրդի քաղաքացիական հասարակության կայացման, ժողովրդագրության և գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովները, որը սակայն, ցավոք, չանցավ: Եվ ինչպես նախորդ ընտրությունների ժամանակ, այս անգամ ևս 26 կանայք տարբեր պատճառներով հրաժարվեցին իրենց մանդատներից: Ես կարծում եմ, որ եթե որևէ բան ենք անում, ապա պետք է մինչև վերջ անենք. կա՛մ պետք է չսահմանենք քվոտա, կա՛մ էլ մինչև վերջ տեր լինենք օրենսդրական մեխանիզմների ապահովմանը:

Փաստ

Կանայք կուսակցություններում և ՀԿ-ներում

Հայաստանում ՀԿ-ներն ավելի շատ են (շուրջ 3700), քան կուսակցությունները, չնայած դրան՝ ՀԿ-ներում ընդգրկված է մեր հայրենակիցների 5,2%-ը, իսկ կուսակցություններում՝ 10,7%-ը:

Դրա հետ մեկտեղ, ՀԿ-ներն ավելի ֆեմինիզացված են, քան կուսակցությունները. ՀԿ-ների շարքային անդամների թվում տղամարդիկ 30,3% են կազմում, կանայք մոտ երկու անգամ գերազանցում են: Բայց ՀԿ-ների ղեկավար կազմում տղամարդիկ 75% են, կանայք՝ 25%:

Կուսակցություններում տղամարդիկ կազմում են 53,4%, իսկ կանայք՝ 46,6%: Բայց ստորին ու միջին ղեկավար օղակներում տղամարդիկ 90,1% են, կանայք՝ 9%, իսկ բարձրագույն ղեկավար կազմում կանանց թիվը գրեթե զրոյական է՝ 1%-ի չի հասնում: Սա խոսում է նաև կուսակցությունների ներքին ժողովրդավարության պակասի և կանանց առաջմղման մեխանիզմների բացակայության մասին, եզրակացնում է «Կովկաս» հետազոտությունների կենտրոնի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը:

Գնահատական

Ինչպիսի՞ն էին կուսակցությունների նախընտրական ծրագրերը գենդերային դիտանկյունից

Այս հարցով դիմեցինք գենդերային հարցերի փորձագետ Լիլիթ Զաքարյանին, ով բոլոր գումարումների Ազգային ժողովի ընթացքում հետևել է խնդրին և համեմատելու եզրեր ունի նախորդ՝ 2007-ի ընտրությունների կուսակցությունների նախընտրական ծրագրերի հետ:

- Դեռևս 2007-ի ընտրությունների ընթացքում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից կատարված մոտ մեկ տասնյակ կուսակցությունների ծրագրերի ուսումնասիրությունից ի հայտ եկավ, որ կանանց օրակարգը դրանցում սահմանափակվում էր ընտանիքին և մայրությանը վերաբերող դրույթներով: Նույն եզրահանգումը կարելի է անել նաև 2012-ի ընտրական ծրագրերը դիտարկելիս: Միայն «Միավորված հայեր» կուսակցության 2012-ի ծրագրում էր նախատեսվում՝ «պետական և հասարակական-քաղաքական կառույցներում կնոջ դերի բարձրացում և կարևորագույն գործընթացներում նրա համակողմանի ընդգրկում»:

Հանուն արդարության պետք է նշել, որ որոշ կուսակցությունների ծրագրերում խոսվում էր նաև կանանց իրավունքների պաշտպանության, աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավման անհրաժեշտության մասին, բայց կուսակցությունների մեծ մասում գենդերային հավասարության խնդրի խորքային ըմբռնումը բացակայում էր:

Այդ տեսանկյունից շահեկանորեն տարբերվում էր 2007-ի ՀՅԴ նախընտրական ծրագիրը, որի մեջ առանձին բաժին կար՝ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը», որում խոսվում էր կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ձեռքբերման, խտրականության վերացման օրենսդրական երաշխիքների անհրաժեշտության մասին: Կարծում եմ՝ ՀՅԴ մոտեցման վրա էական ազդեցություն էր ունեցել Սոցինտերնի դիրքորոշումը, որը, ցավոք, չարտահայտվեց ԱԺ-ում նրանց խմբակցության կազմում:

- Իսկ մի՞թե ողջունելի չէ, որ կուսակցությունները մտահոգվում են մայրության խնդիրներով:

- Իհարկե լավ է, որ կուսակցությունները կարծում են՝ կինը որպես մայր պետք է պաշտպանված լինի: Բայց հիմա ես հարց տամ. իսկ արդյո՞ք կինը պաշտպանված է որպես քաղաքացի, որպես մասնագետ, պրոֆեսիոնալ, արդյո՞ք պետք չէ օգնել կանանց՝ ընտանիքն ու կարիերան համատեղելու հարցում:

Օրինակ՝ ինչո՞ւ մեր հանրապետությունում չկան ծրագրեր, որոնք մայրացած կանանց օգնում են արագ վերապատրաստման միջոցով վերադառնալ մասնագիտական ոլորտ: Ինչո՞ւ մեր խորհրդարանում, մյուս երկրների օրինակով, չկա մանկան սենյակ մայրացած պատգամավորների համար: Այդ «ինչու»-ներն այնքան շատ են, որ կարելի է անվերջ թվարկել: Եվ հենց այդ «ինչու»-ներն են ստիպում մտածել, որ գենդերային հավասարության հարցերին մեզանում դեռ լուրջ չեն վերաբերվում, եթե ավելի կոպիտ չասենք՝ իմիտացիա են անում: Եվ հենց այդ պատճառով գենդերային մոտեցումներն իրականում տեղ չեն գտնում կուսակցությունների ծրագրերում:

- Թվում էր՝ այս հարցերի գիտակցումը պետական մակարդակով առկա է, Կառավարությունն ընդունեց ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգը, այնուհետև հաստատեց դրա հետ կապված ռազմավարական ծրագիրը...

- Անշուշտ, վերջին տարիների ընթացքում բավական փոփոխություններ են տեղի ունեցել պետության գենդերային քաղաքականության ոլորտում: Բայց դրա հետ մեկտեղ, Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարվեցին, և Կառավարության ծրագրում նախանշված 30%-ի փոխարեն հաստատվեց նվազագույն 20% գենդերային քվոտան: Իսկ համամասնական ցուցակները կազմելիս դարձյալ հնչում են դժգոհություններ, որ գենդերային քվոտան արհեստական միջոց է... Անգամ այն կուսակցությունները, որոնց կազմում 40-50 տոկոսը կանայք են, հայտարարում են, որ չպետք է արհեստականորեն արագացնել գործընթացը, քանի որ բավականաչափ պատրաստված կին կադրեր չկան...

Քվեարկենք հանուն փոփոխությունների

«Գենդերային հավասարությունը սկսվում է հենց Ազգային ժողովից»

- Գենդերային հավասարությունը սկսվում է հենց Ազգային ժողովում կանանց ներգրավվածությունից, չէ՞ որ այստեղ են մշակվում բոլոր այն օրենքները, որոնք վերաբերում են կանանց իրավահավասարությանը: Եվ եթե այն ԱԺ-ում է խախտվում, ապա ավելորդ է խոսել այլ կառույցների մասին»,– ասում է «Օքսֆամ» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Մարգարիտա Հակոբյանը՝ ամփոփելով անցած խորհրդարանական ընտրություններում կանանց մասնակցությունն ընդլայնելու ուղղությամբ կազմակերպության և իր գործընկեր ՀԿ-ների՝ Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի և «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ իրականացված նախաձեռնությունները:

Կանանց մասնակցության թեմային անդրադարձն ամենևին էլ պատահական չէ «Օքսֆամ»-ի համար, որը Հայաստանում իր 18-ամյա գործունեության ընթացքում գյուղատնտեսության, առողջապահության և այլ ոլորտներում ծավալած բոլոր զարգացման ծրագրերի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում կանանց հավասար մասնակցության իրավունքի իրականացման խնդրին: Հավատարիմ մնալով իր հիմնական առաքելությանը՝ պայքարել աղքատության, անհավասարության և անարդարության դեմ, «Օքսֆամ»-ը մշակում և իրականացնում է իր ծրագրերն այնպես, որ կանայք առավել մեծ դեր խաղան իրենց կյանքին վերաբերող որոշումների կայացմանը:

Ինչպես նշում է Մարգարիտա Հակոբյանը, «կանայք մեր ծրագրերի սիրտն ու հոգին են», գենդերային հավասարությունը «Օքսֆամ»-ի ծրագրերի առանցքային մասն է կազմում, այն ինտեգրված է բոլոր առաջնահերթություններում՝ լինեն սոցիալական, տնտեսական թե քաղաքացիական իրավունքներին վերաբերող ծրագրեր:

«Երկրի զարգացման համատեքստում կարևորելով մասնակցային ժողովրդավարությունը՝ «Օքսֆամ»-ը միշտ ուշադրությամբ է հետևել տեղական ընտրական գործընթացներին, իսկ այս անգամ ժամանակի հրամայական ենք դիտարկել խորհրդարանական ընտրություններում կանանց առավել ակտիվ ներգրավումը», - նշում է տիկին Հակոբյանը՝ ընդգծելով, որ այդ նպատակը ներառված էր նաև «Օքսֆամ»-ի գործընկեր շուրջ 30 հասարակական կազմակերպություններ համախմբող Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի բոլոր գործողություններում:

Բացի այդ, «Կովկաս» կենտրոնի հետ համագործակցությամբ «Օքսֆամ»-ը նախաձեռնել էր «Կանանց ձայնը և մասնակցությունը 2012-ի խորհրդարանական ընտրություններում» հետազոտությունը, որի վերջնական արդյունքներն ու փորձագիտական գնահատականները շուտով կներկայացվեն հանրությանը:

Իմ քվեն ուժ է

Նախընտրական շրջանում Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի անդամ ՀԿ-ները բավական ուշագրավ նախաձեռնություններով են հանդես եկել, ինչի մասին մեզ պատմեց ցանցի համակարգող Լիլիթ Չիթչյանը:

«Քվեարկենք հանուն փոփոխությունների» ծրագրի շրջանակներում Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում հետաքրքիր ուսուցողական քարոզարշավ էինք նախաձեռնել՝ համայնքի բնակչությանը ծանոթացնում էինք ընտրական գործընթացի կարևորագույն կետերին, հանդիպումներ էինք կազմակերպել տեղի պատգամավորության թեկնածուների հետ և նրանց փոխանցել խոստում-թերթիկներ, որոնք պատրաստվել էին «Օքսֆամ»-ի գյուղատնտեսության և առողջապահության ծրագրային առաջնահերթությունների հիման վրա», - ասաց Լիլիթ Չիթչյանը՝ նշելով, որ իրենք հետևողական են լինելու, որպեսզի այդ խնդիրներն անպայման բարձրաձայնվեն ԱԺ-ում:

«ԱԺ առաջին նիստից սկսած մեր ցանցն իրականացնում է մոնիթորինգ, թե ինչպե՛ս են այդ խոստումները տվյալ պատգամավորների կողմից բարձրացվում և իրականացվում», - ավելացրեց նա:

«Իմ քվեն ուժ է» ֆլեշմոբը նույնպես ցանցի հերթական նախաձեռնություններից է, որն «Օքսֆամն» իրականացրել է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի հետ: «Մասնակիցները՝ երիտասարդ կանայք և աղջիկներ, անցնում էին փողոցներով և տեղեկացնում բոլորին իրենց ընտրական իրավունքի մասին: Նրանք ցույց տվեցին անցորդներին, որ յուրաքանչյուրի քվեն կարևոր է, յուրաքանչյուրի ձայնը՝ արժևորված»:

Իսկ ահա «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի և «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ-ի հետ Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցը ստորագրահավաք կազմակերպեց և իր կայքում բոլոր քաղաքական ուժերին ուղղված կոչ տեղադրեց, որպեսզի ընտրվելու դեպքում նրանք պահպանեն ցուցակներում ընդգրկված կանանց համամասնությունը խորհրդարանում, նշեց Չիթչյանը:

Կանանց մուտքով է երկիրը փոխվելու

Լարիսա Ալավերդյան.
«Ոչ թե վիրավորվող, այլ մշտապես աշխատող տեսակ եմ»

«Ինձ համար քաղաքական գործչի ամենակարևոր գիծն ազնվությունն ու նվիրվածությունը է ժողովրդի շահերին: Ոչ գիտելիքը, ոչ ունակությունները, այդ ամենը ցանկության դեպքում կտրվի, եթե մարդն ազնիվ նկատառումներով է մտնում քաղաքական դաշտ: Դրա համար էլ, ինչքան էլ խոսեն քաղաքականության մեջ պրագմատիզմի մասին, կարծում եմ՝ կասկածելի մեթոդներով սկսված գործը երբեք դրական արդյունքների չի հանգեցնի»,- ասում է նախորդ գումարման ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» խմբակցության անդամ, ՀՀ մարդու իրավունքների առաջին պաշտպան Լարիսա Ալավերդյանը, ում բացակայությանը նոր խորհրդարանում հասարակությունը մեծ ափսոսանքով է վերաբերվում:

Մեր այս դիտարկմանը ինքը՝ Ալավերդյանը, կես կատակ-կես լուրջ արձագանքում է՝ իմ օրինակով ընդամենն ապացուցեցի, որ հավերժ պատգամավորներ չեն լինում: Այսօր նա գլխավորում է մարդու իրավունքների պաշտպանության նորաստեղծ ամբիոնը Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանում, ինչպես նաև շարունակում է իր գործունեությունը «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ում:

Ինչպես հայտնի է, Լարիսա Ալավերդյանը ընտրություններից հետո «Ժառանգության» թիմից հեռանալու որոշում կայացրեց:

«Ես հայտնել եմ իմ ընդհանուր անհամաձայնությունը այն սկզբունքին, որով ձևավորվել է ցուցակը… Ասել եմ, որ կմնամ թիմի հետ մինչև ընտրությունների ավարտը, իսկ հետո, ըստ օրենքի, կկողմնորոշվեմ»,- նշում է նա՝ հիշեցնելով, որ ցուցակի 41-րդ տեղը ի սկզբանե ուղերձ էր հասարակությանը՝ իր սկզբունքային դիրքորոշման մասին:

Մասնավորապես, նա չէր թաքցնում , որ համաձայն չէր «Ազատ դեմոկրատների» հետ դաշինքին, քանի որ այն, նրա կարծիքով, հաջողություն չի բերի «Ժառանգությանը»: Ցավոք, այնպես ստացվեց, որ նա իրավացի էր: Այսօր էլ է նույն կարծիքին է, մտածում է, որ «ժառանգությունը» պետք է շարունակի ժողովրդի շահերին պաշտպան կանգնելու իր որդեգրած ուղին և խնդիր ունի կատարելու իր խոստումները: Մնացածը, իր խոսքով, տեխնոլոգիաներ են, որոնք անձամբ իր համար ի սկզբանե հասկանալի չէին:

«Հնարավոր է՝ «Ժառանգության» տեսակետից ամեն ինչ գրագետ էր, բայց ինձ համար ընկալելի չէր: Ուղղակի կցանկանամ, որ եթե կուսակցությունների անդամները ինչ-որ քայլ են անում, մտածեն ոչ թե այսօրվա, այլ՝ հինգ տարվա կտրվածքով»,- նշեց Լ. Ալավերդյանը:

Մեր հարցին՝ արդյոք վիրավորվածություն չի՞ զգում, որ «Ժառանգության» ակտիվ պատգամավորները, այդ թվում՝ ինքը, չկան նոր գումարման խորհրդարանում, պատասխանում է. «Ոչ թե վիրավորվող, այլ մշտապես աշխատող տեսակ եմ»:

Անդրադառնալով կանանց մասնակցության խնդրին՝ Ալավերդյանը նկատում է, որ միայն կանանց զանգվածային ակտիվ մուտքը կարող է փոփոխություն բերել քաղաքական դաշտում.

- Չպետք է սպասել, որ երկիրը փոխվի, հավասար պայմաններ լինեն, ու կանայք նոր մտնեն ակտիվ քաղաքականության մեջ: Հենց կանանց մուտքով է երկիրը փոխվելու… - համոզմունք է հայտնում նա՝ նկատելով, որ ի դեմս կանանց հայ հասարակությունն այնպիսի ներուժ ունի, որին մենք անգամ չենք էլ մոտեցել:

Լիլիթ Գալստյան.
«Կիրթ կինն ունակ չէ խաղալու առկա քաղաքական խաղի կանոններով»

«Ցավոք, Հայաստանը լրջագույնս հեռու է ժողովրդավարական երկրի մոդելից: Այս պայմաններում խոսել կանանց՝ խորհրդարանում հայտնվելու առողջ մեխանիզմների, քարոզարշավի, ներկուսակցական դեմոկրատիայի մասին, անկեղծ ասած, հեքիաթի շարքից է»,- նման կարծիք հայտնեց ՀՅԴ անդամ, ԱԺ նախկին պատգամավոր Լիլիթ Գալստյանը:

- Ճիշտ է, կնոջ ներկայացվածությունը կուսակցություններն ապահովեցին՝ յուրաքանչյուր 6-րդը, բայց բացարձակապես գաղտնիք չի, թե ի՛նչ սկզբունքներով Հայաստանում ձևավորվեցին կուսակցությունների ցուցակները… Եթե կուսակցություններն ունենային ներքին դեմոկրատիա, ապա հնարավոր չէր լինի, որ կնոջը ցուցակ բերած կուսակցությունը ինչ-որ պահի նրան հեշտությամբ հետ մղեր: Նորմալ կինը, քաղաքակիրթ, ժողովրդավարական չափանիշներով մտածող կինն ունակ չէ խաղալու առկա քաղաքական խաղի կանոններով…

Պատասխանելով այն հարցին՝ արդյոք ասվածը վերաբերո՞ւմ է իր իսկ կուսակցությանը, Գալստյանը պնդեց, որ իր կուսակցությունում ներքին դեմոկրատիա կա, և կուսակցական ցուցակում կանայք զգալի թիվ էին կազմում (32%): Դրա հետ մեկտեղ նա չի կարող դրական գնահատել այն փաստը, որ այս ընտրությունների արդյունքներով Դաշնակցությունն իր պատմության մեջ առաջին անգամ խորհրդարան մտավ առանց կին պատգամավորների: «Բայց ունենք այն, ինչ ունենք»,- եզրափակեց նախկին պատգամավորը…

Զայն բազմաց

Ի՞նչ անել, որ «չվախենան կանանցից»

- Քվոտաները ձևական բնույթ ունեն, դրանք պետք է լրացվեն հստակ մեխանիզմներով, որ կուսակցությունները ոչ թե բերանները փակելու համար ինչ-որ կանանց ընդգրկեն ու դուրս թողնեն, այլ իրոք իրենք էլ աճեցնեն կանանց կադրեր՝ հնարավորություն տալով նրանց դրսևորվելու: Չվախենան կանանցից…

- Կարծում եմ՝ եթե քվոտան գենդերային բալանսն ապահովելու առումով մեկ քայլ առաջ էր, ապա մանդատից հրաժարվելը՝ երկու քայլ հետ: Դա արդեն կախված է կին քաղաքական գործչի մտածելակերպից, և թե ինչո՛ւ է նա հայտնվել ցուցակում: Եթե զուտ քվոտան էր պատճառը, ապա իսկապես նրա դերն այդտեղից դուրս գալն է: Իսկ եթե նա իրոք վաստակել է իր տեղը ցուցակում, ապա, կարծում եմ, այդ կին գործիչը չի հրաժարվի իր մանդատից և կկարողանա այն բարձր պահել….

- Անընդունելի է ոչ միայն կանանց հետ կապված, այլև ընդհանրապես այդ պրակտիկան, որ կուսակցապետները նախապես դիմումներ են վերցնում հրաժարականի մասին իրենց ցուցակներում ընդգրկված մարդկանցից, որ հաջողության դեպքում կարողանան առաջ բերել այլ մարդկանց և դարձնել նրանց պատգամավոր… Ընտրողները ձայն են տալիս ցուցակում առաջին տեղի թեկնածուների համար, բայց հետո վերջին տեղերում ընդգրկվածներն են դառնում պատգամավորներ: Չի կարելի ցուցակը ձևախեղել…

- Երբեմն լինում են իրավիճակներ, որ մարդուն չես կարող մեղադրել՝ առողջական խնդիրներ և այլն, դա այլ խնդիր է: Բայց որ զոռով, ստիպելով … էլ ինչի՞ համար էին ցուցակը կազմելիս այդ մարդուն ներգրավում:

- Թաղային հեղինակություններ, ֆինանսական մեծ հոսքերի առկայություն, օրենքով չամրագրված տարբեր մեթոդների կիրառում՝ սրանք են տղամարդկանց կողմից թելադրվող խաղի կանոնները: Անգամ հնչող այն հարցադրումները, թե կանանց հետ ի՞նչ դեբատ անենք, ավելորդ անգամ ցույց են տալիս, որ նրանք ձևական են ընդունում կնոջ մասնակցությունը…

- ԱԺ-ի նոր կազմում կանանց թիվն ավելի բարձր է, ուստի կարելի է ենթադրել, որ որոշակի առաջընթաց կա այս ոլորտում, որը, սակայն, դեռևս բավարար չէ: Կանանց ներկայացվածությունը ԱԺ-ում բարձրացնելու համար անհրաժեշտ է տարբեր ծրագրեր իրականացնել՝ խրախուսելով նրանց դերն ու մասնակցությունը, ինչպես նաև բերելով դրական փորձի օրինակներ, ինչը կխթանի կանանց մասնակցությունը քաղաքականությանը:

«Կանանց ձայնը և մասնակցությունը 2012-ի խորհրդարանական ընտրություններում» հետազոտությունից

Դիտորդ

…Թեկնածուների առաջադրման քվոտայի արդյունավետությունը պետք է վերանայվի, որպես ժամանակավոր հատուկ միջոց՝ կանանց թեկնածու լինելու իրավունքի և հնարավորության փաստացի հավասարությանը հասնելու նպատակով:

…Պետք է խրախուսել կուսակցություններին ունենալ գենդերային քաղաքականություն և հանրորեն տրամադրել իրենց անդամների գենդերային բաշխվածության վերաբերյալ տվյալները: Կարելի է քննարկել, որպեսզի կուսակցություններին պահանջ ներկայացվի իրենց ղեկավար կառավարման մարմիններում կանանց ներկայացվածություն ապահովել և թեկնածուներ ընտրելու ավելի թափանցիկ ու ժողովրդավարական եղանակներ ունենալ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցից

Խորհրդարանի նոր դեմքերը

Ինչո՞ւ են կանայք խորհրդարան գալիս: WomenNet.am-ի այս հարցարդրմանն են պատասխանում ԱԺ նորընտիր պատգամավորները: Հարցազրույցներն ամբողջությամբ կարելի է կարդալ http://womennet.am/ կայքում:

Արփինե Հովհաննիսյան. «Ուզում եմ ասել իմ՝ որպես մասնագետի խոսքը»

Նորընտիր Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցության պատգամավոր Արփինե Հովհաննիսյանը դասավանդում է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում, իրավագիտության թեկնածու է: Ուսանելու տարիներից սկսած միշտ զուգահեռ աշխատել է պետական համակարգում՝ ՀՀ արդարադատության նախարարությունում, ՀՀ նախագահի աշխատակազմում, որից հետո՝ ՀՀ ԱԺ-ում՝ որպես ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական:

- Ընդհանրապես կյանքում հեղափոխական զարգացումներ չեմ սիրում, էվոլյուցիոն ճանապարհի կողմնակիցն եմ: Ինձ մոտ միշտ է այդպես եղել. քայլ առ քայլ, ամեն անգամ աստիճանաբար է հասունացել գաղափարը, որ կարող եմ ավելին անել: Իմ մուտքն էլ քաղաքականություն բնականոն ու օրինաչափ զարգացման արդյունք էր: Ուզում եմ քաղաքականության մեջ ասել իմ՝ որպես մասնագետի խոսքը, ուզում եմ այն գիտելիքները, որ ձեռք եմ բերել և դեռ պետք է ձեռք բերեմ, ծառայեցնել հանուն ՀՀ ժողովրդի: Ցանկացած գործի մոտենում եմ մեծ նվիրումով, նույնիսկ ամենափոքր խնդիրը փորձում եմ լուծել այնպես, կարծես դա իմ վերջին հարցն է:

Ինչ վերաբերում է կանանց նկատմամբ խտրականության դրսևորումներին, ապա կա արտաքին բնույթի խտրականություն և հենց կանանց ներսում եղած ինքնասահմանափակում:

Երբ կինն ինքն իրեն չի պատկերացնում հասարակական գործընթացներում և կարիերայի աճի չի ձգտում, բնականաբար, նման ինքնասահմանափակումը պետք է հանգեցնի նաև արտաքին խտրականության, այսպես կոչված «ապակե առաստաղի», եթե գենդերային եզրույթներով խոսենք: Որոշակի առումներով բոլոր կանայք էլ բախվում են խտրականության, սակայն կարծում եմ՝ յուրաքանչյուրը պետք է իր ներսում հաղթահարի այդ բարդույթները, որից հետո միայն կկարողանա հաղթահարել արտաքին խոչընդոտները...

Լյուդմիլա Սարգսյան. «Ուզում եմ, որ քաղաքականությունն ավելի բարոյական լինի»

«Եկել եմ քաղաքականություն, որովհետև ուզում եմ, որ այն ավելի մարդկային կերպարանքով, ավելի բարոյական լինի: Ապրենք մի երկրում, որտեղ Սահմանադրությունն օրենք է բոլորի համար, երկիր, որտեղ օրենքը պաշտպանի մարդուն: Ուզում եմ, որ քաղաքացին պահանջատեր լինի ու հետևողական իր պահանջատիրությանը, հասկանա, որ յուրաքանչյուր մարդ ավելի մեծ արժեք ունի, քան եկող ու գնացող իշխանությունները»,- այսպես է պատկերացնում իր անելիքը քաղաքական դաշտում Հայ ազգային կոնգրեսի անդամ, Հայաստանի Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ատենապետ Լյուդմիլա Սարգսյանը:

- Չեմ կարծում, թե քաղաքականությամբ զբաղվելու համար շարժառիթի անհրաժեշտություն կա: Մարդը կա՛մ մտածող է, կա՛մ ոչ, մտահոգ է, կամ՝ ոչ: Երբեք ինձ քաղաքական գործընթացներից դուրս չեմ համարել, որովհետև ինձ մշտապես մտահոգել է այն, ինչ կատարվում է երկրում: Եվ, բնական է, այդ մտահոգությունները ստիպել են կողմնորոշվել՝ լինել ուղղակի քաղաքացի՞, ով դիտորդի կարգավիճակում է, թե՞ քաղաքացի, ով ցանկանում է գործընթացների վրա ազդելու հնարավորություն ունենալ և այս երկրում ինչ-որ բարեփոխման գործընթացի մասնակցել: Այդ ամենը մեզանից յուրաքանչյուրն անում է զավակների, սերնդի համար և եթե ինչ-որ հարցում թերանում է կամ անտարբեր է, ապա դա անտարբերություն է սեփական երկրի, ժողովրդի, սեփական զավակիդ նկատմամբ:

Թեև խաղի կանոնները սահմանում են տղամարդիկ, և կանանց համար մի փոքր դժվար է խաղալ այդ կանոններով, սակայն այն կանայք, ովքեր փորձ են անում «դուրս գալ իրենց խոհանոցներից» և նպատակաուղղված առաջ են գնում, շատ բաների են հասնում:

Իմ գնահատմամբ՝ ամբողջ 131 պատգամավորի մեջ, ես էլ ներառյալ, հինգ կին կա, ովքեր փորձում են ներազդել քաղաքական գործընթացների վրա: Մյուսները պետք է կողմնորոշվեն՝ «անգլիական թագուհի՞» են, թե՞ ոչ...

Դիրքորոշում

«Մենք հեջաբը ներքուստ ենք կրում»...

Նվարդ Մանասյանը պատգամավորության թեկնածուներից երևի թե միակն էր, որ ոչ միայն չէր խուսափում «ֆեմինիզմ» բառն արտասանելուց, այլև իրեն այդ գաղափարախոսության ջատագովն է համարում: Գուցե զարմանալի թվա այդ հանգամանքը, բայց մեզանում նույնիսկ կանանց իրավունքների պաշտպանությամբ անմիջականորեն զբաղվող շատ կանայք կարծես թե վախենում են իրենց ֆեմինիստ անվանելուց...

Խորհրդարանական ընտրություններում Նվարդ Մանասյանն ընդգրկվել էր ՀՅԴ համամասնական ցուցակում: Նա գենդերային անհավասարակշռության հարցերով բավական երկար ժամանակ և լրջորեն է զբաղվում: Դասավանդելով Երևանի պետական լեզվաբանական համալսարանի կրթության կառավարման ամբիոնում՝ համարում է, որ գենդերային գիտելիքները խիստ անհրաժեշտ են այն մասնագետներին, ովքեր վաղը ստանձնելու են այդ ոլորտի կառավարումը:

- Գիտեք, ես կցանկանայի հեջաբ հագնել, քան հասկանալ, որ ներքուստ ենք կրում անտեսանելի այդ հեջաբը: Գուցե եթե այդ հեջաբը հագնեի, ավելի շուտ կհասկանայի, որ անհավասար եմ ու ամեն օր կպայքարեի այդ անհավասարությունը շտկելու համար: Ինձ թվում է՝ եթե կարճ կամ բաց զգեստ եմ հագնում, եթե երեկոյան փողոց եմ դուրս գալիս, ապա ազատ եմ: Բայց իրականում ազատ չեմ, ամենահանգրվանային տեղերում իմ ազատությունը միանգամից կապվում է: Երբ ամուսնանում եմ, իմ ամուսինն ու սկեսուրը կարող են տնօրինել իմ ճակատագիրը, սահմանափակել ծնողներիս տուն այցելությունը, որոշել իմ փոխարեն՝ աշխատե՞մ, թե՞ ոչ, երեխա ունենա՞մ, թե՞ ոչ, քանի՞սը, ի՞նչ սեռի ու ինչպե՞ս դաստիարակեմ...

Սահմանադրությամբ հավասար երկրում ենք, բայց արդյոք կանայք յուրացրե՞լ են դրա նշանակությունը: Տվե՛ք ինձ աշխարհի լավագույն օրենքները, ես կշարունակեմ նույն ստրուկը մնալ: Մենք կրթական համակարգում այս հարցը դնելու խնդիր ունենք: Այն ուսուցիչները, ովքեր ամեն անգամ աղջկան վստահություն չեն տալիս, պետք է հասկանան, որ կոտրում են ապագա կնոջը, սահմանափակում նրա ազատությունը նույնիսկ մասնագիտություն ընտրելու հարցում: Եթե դպրոցում աղջիկներին ասում ենք՝ դու սա չես կարող, նա չես կարող, ապա 25 տարեկանում կինն արդեն վստահ է, որ ոչինչ չի կարող անել... Մեդիաքաղաքականությունն էլ իր հերթին կնոջը նեղ դեր է տալիս՝ նա պետք է միշտ լինի կիսամերկ, գեղեցիկ և երիտասարդ: Բայց, պարզվում է, կանայք նաև տղամարդկանց հավասար ծերանում են...

Որպես կին՝ խտրականությունը զգում ես ծնված օրվանից ոչ միայն Հայաստանում, այլև ամենուր, դու պետք է անընդհատ ինքնահաստատվես: Հայ հասարակության մեջ շատ են տարածված խոսակցությունները, իբր քաղաքականությունը, հանրային կյանքը կնոջ տեղը չեն: Նման բաները երբեմն թափանցում են նաև կուսակցություն: Չափազանց դժվար է անհատականությունդ պահելը, հավասար պայմաններում գտնվելը...

Պատկերացումից, որ մի օր կին նախագահ, կին վարչապետ կունենանք, խորհրդարանում հավասար ներկայացվածության կհասնենք, դեռևս շատ հեռու ենք: Այնպես որ, ընտրական ցուցակներում գենդերային քվոտավորումը լավ կյանքից չի առաջացել...

> «Հասարակության 50%-ը չի մասնակցում որոշումների կայացմանը և քննարկումներին: 50%-ով աղքատ ենք: 50%-ին քաղաքականապես ստերիլիզացրել ենք, ասել ենք՝ գնա խոհանոց, մեռիր ննջարանում, 40-ից հետո էլ կյանք չունես: Ինչո՞ւ ենք զարմանում, որ ամենաաղքատ ազգերի շարքում ենք հայտնվել: Կինը հարստություն, սոցիալական արդարություն, բազմազանություն կբերի, որովհետև մի կողմի տեսանկյունը չի կարող միշտ իրավացի լինել»...

ՀԿ ամբիոն

«Ընտրությունների գործող համակարգում ինտելեկտուալ կնոջ համար տեղ չկա»

- Ասեմ, որ ինձ շատ վշտացրեց այն փաստը, որ պատգամավորի դերում իրենց լավագույնս դրսևորած կանայք ներկայացված չեն լինելու նոր գումարման Ազգային ժողովում՝ «Ժառանգությունից» Անահիտ Բախշյանը և Լարիսա Ալավերդյանը, Դաշնակցությունից Լիլիթ Գալստյանը, որոնք գոնե ինձ համար անհասկանալի պատճառներով հայտնվեցին ոչ անցողիկ տեղերում: Այս կանանց ձայնը միշտ լսելի է եղել խորհրդարանում, նրանք միշտ ներկայացրել և առաջ են տարել հասարակության շահերը, բարձրացրել են հրատապ լուծումներ պահանջող հարցեր: Ակամայից սկսում ես մտածել, որ գուցե հենց այս ակտիվությունը նրանց վատ ծառայություն մատուցեց, գուցե նրանք այնքան ինքնուրույնություն և համառություն ցուցաբերեցին, որ դրանով իսկ ստվերում թողեցին իրենց տղամարդ գործընկերներին: Ամեն դեպքում կորուստը հասարակության համար ակնհայտ է: Ինչ վերաբերում է մեծամասնական ընտրատարածքներին, ապա եթե վերլուծենք, թե ո՛ւմ են յուրաքանչյուր դեպքում պարտվել կանայք, ապա հերթական անգամ ակնհայտ է դառնում, որ մենք իջել ենք այնպիսի մի մակարդակի, ուր որոշիչ են միայն փողն ու բիրտ ուժը: Եվ այս առումով ընտրությունները հանդիսանում են մեր հասարակության բարոյական և ինտելեկտուալ մակարդակի ցուցանիշ: Պարզից էլ պարզ է, որ նման համակարգում ինտելեկտուալ կնոջ համար տեղ չկա:

Կարինե Դանիելյան,
«Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի նախագահ

«Ամեն ինչի հիմքը տնտեսությունն է»

- Դժվար է խոսել վեհ գաղափարների մասին, ինչպիսին ժողովրդավարությունն է, և փորձել այն ինչ-որ մեկին պարտադրել, եթե կան սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ, եթե տնտեսական ոլորտում կանայք գոնե փոքր, բայց հաջողություններ չունեն, և ժողովուրդն ինքը չի զգում դա: Կանանց տնտեսական բարձր մասնակցությունը հաստատ կարող է բերել նրանց քաղաքական մասնակցության:

Ինչ վերաբերում է քվոտային, ապա այն հարկադրական մի մեխանիզմ է, բայց բոլորս էլ գիտենք, որ հայ ժողովուրդը, լինելով շատ հնարամիտ, գտնում է մեխանիզմները շրջանցելու հնարավորություն: Թեպետ համամասնական ցուցակում, ըստ օրենքի, կին թեկնածուները որոշակի տեղ են զբաղեցնում, բայց արդյունքում, ինչ-ինչ պատճառներով, նրանք կարող են չհայտնվել ԱԺ-ում, ինչը դարձյալ եղավ: Գուցե պետք է քվոտայի մեխանիզմը այլ կերպ ձևակերպել՝ ոչ թե ցուցակներում, այլ արդյունքում ունենանք այդքան թվով կանայք: Չէ՞ որ կարևորը արդյունքն է, ոչ թե գործընթացը:

Լիլիթ Ասատրյան,
Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի նախագահ

Համարի վրա աշխատել են՝ Լիլիթ Քոչինյանը, Հասմիկ Հարությունյանը, Մարիամ Մուղդուսյանը

OXFAM

Հատուկ թողարկումը պատրաստվել է ՕՔՍՖԱՄ հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ

Գլխ. խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ promediagender_arm@yahoo.com